

Նրա աշխատութիւնների մէջ կարևոր տեղ են զբաղում նաեւ մենեքաները, որոնք իրենց մեկամաղձոտ և էլէգիական բնոյթով ցուցահանում են նրա տաղանդի ամենաբնորոշ կողմը: Այդ մենեքաների զլխաւոր թէման վերցրել է Սպենդիարեանը զանազան ազգերի ժողովրդական երգերից: Այդ պատճառով էլ նրանք խոր տպաւորութիւն են թողնում:

VII. Ա. Սպենդիարեանի երաժշտութեան զգացմունքը

Ա. Սպենդիարեանի առաջին շրջանի ստեղծագործութիւնների մէջ զերազանցօրէն իշխում է լիբիզմը իր մեկամաղձոտ, նուրբ և էլէգիական բնոյթով: Այնտեղ կոմպոզիտորը ցուցահանում է իր ներքին հոգեկան աշխարհը, արտայայտում իր զգացումներն ու խոհերը: Միաժամանակ ցուցանում է նա ժողովրդի հոգին, մասսայի կեանքը և շարկապում իր հոգեբանութեան հետ:

Այդ շրջանի ստեղծագործութիւնների գոյները աւելի պատկերաւոր են, թափանցիկ, մեղմ, խորը, քնքոյշ և շարժուն:

Նրա երկրորդ շրջանի ստեղծագործութիւնների մէջ որոշ տեղ է զբաղում դրամատիզմը: Այդ ուղղութեամբ է զբաղում նրա «Այմաստ» օպերան, ուր տալիս է նա դրամատիքական, հերոսական ուժեղ և բուռն մոմէնտներ:

Այժմ անցնենք նրա երաժշտական երկու գոհարներին՝ «Երեք Արմատեան» և «Այմաստ» ի բովանդակութեան:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Շարարայեղի)

Մ. - Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ

□ ♦ □

Թանկարժաթին մոլեգին փոթորկէ մը վերջ, կապտոտ երկնքով՝ թիէփուկան դահլիճն իր գեղանկար առաստաղին տակ կը համախմբէր վնեւտարնակ հայութիւնը, այն սրբազան յարկին տակ՝ ուր կը թեւածէին բերկրաւից՝ Մուրատի և Ռափայելի ազգասէր անմահ ոգիները:

Մըրիկն ու անոր յաջորդած անդորրութիւնը խորհրդածել տուին իսկոյն տխրաւոր յոյշ պատկեր մը օրուան տեսարանէն. կրակի, սուրի մահազոյժ անբաժնեբէն պըծած հայուն վերջին և միակ յոյսերը, այդ անոյշ «զրգարանին» մէջ, որ «Հա-

յաստանեայց բնագաւտի» բովանդակ գեղն և ոգին ունի, Մ. Ռ. Վ. զբիւն մէջ, Մեծին Մխիթարայ սերունդին շնչով՝ խաղաղութիւն, լոյս, կեանք գտան. երջանիկ քան շատ մը տառնեակ հազարներ որ դեռ ցիր ու ցան կեանքի ու մահուան երկունքը կը կրեն: Ու այդ օրը, այդ ժամուն, այդ պատանինները քաջակամ և առողջ մարմնով, ներացած ու հարստացած հոգիով մը այն ամէն բանով՝ որ զերազանցապէս բարձր և սուրբ է, կրօնքի և ազգին սիրով, պատարաստ էին պարզել իրենց թոյլը դէպի կեանք մը յոյսերով լի, ինչպէս թոշնիկներ որ կը սլանան վերջին անգամ մայրենի բոյնէն դուրս՝ սորված թոշիլ ու ապրիլ. բայց կը մնար դեռ յետին հանգիստը ժամը, յորում հոր մը խրախոյան

ու համարյո՞րը պիտի ստանային, հրաժեշտը տխուր բայց վերահաս:

Ժամը 5 էր երբ հանդէսն սկսաւ. օդին անակնկալը դժբախտաբար շատ մը եկեղեցական և քաղաքական բարձրաստիճան հրաւիրեալներ արգիւրէր էր ակումբին արտաքին փայլն աւելցնելու. բայց հոն էին ազգային գաղութը, Միաբանութեանս Հայրերն ու սաները, վենետիկ ծովային և քաղաքական իշխանութիւններու ներկայացուցիչները, բուսականութիւ Մ. Ռ. Ի սաներ նախորդ տարիներու շրջանաւարտներէն, և անոնց մէջ հինաւորաց պատկառելի և ազգասէր Ղէմը մը Պ. Յ. Սրկուճեան, և տեսչական և ուսուցչական մարմնէն զատ ուրիշ շատ բարեկամներ:

Հանդէսին ծայր տուաւ աշակերտներու բազմութիւնը՝ բնմէն հնչելով բուն խանդով Մ. Ռ. Ի. քայլերգը, և խանդավառ ծափերուն մէջ՝ որ մեծ և անմահ բարեբարներու յիշատակին կը նուիրուէին. իտալական մեղմ և անոյշ շեշտով հրաժեշտի ողջոյնը կրկնեց Արմէն ճիւղմէնեան բարերարներուն և վաստակաւոր հայրերուն, ինչպէս մոգիչ վենետիկին՝ որ խոր և անջինջ յիշատակներ դրոշմեր էր իրենց հոգւոյն մէջ:

Կը յաջորդէր Massenetի Angelus մեղեդին՝ բոլորովին անոյշ և սրտազաւ. և ահա դարձեալ բնմէն լսուեցաւ պատանեկան շեշտ մը աշխոյժ. շրջանաւարտներու ֆենիամինն էր, Սուրբի էքստրանան, որ մանկական թոթովածնքի մը հմայքով կը նուագէր երախտագիտութիւն ու սէր հանդէպ անոնց՝ որ իրենց բացեր էին երջանկութեան ուղին:

Պահ մը վերջ Marcelloի դաշնակաւոր սաղմոսները կ'ունենդրէինք, որոնց իրենց պատկերներու նրբերանգով և անոյշ ելեւէջ-

ներով խոր և վսեմ տպաւորութիւն մը կը գործէին:

Ու յանկարծ զուտ ֆրանսացիի մը ճապուկ հնչումով, վաստահ, արի, սրաթոխ բայց խորհրդաւոր ճախրանք մը կ'ուղղէր շրջանաւարտներու պարագլուխը Կարպիս Գասպարեան, թոխք մը դէպի գործի ու պայքարի կեանքը, որ իրենց առջեւ կը բացուէր՝ դպրոցի քաղցր և անդորր սեմերէն անդին. ու պահ մը կը խորհրդածէր անդրադառնալով գիտակցութեան իրենց պարտքին հանդէպ Աստուծոյ, հայրենիքին և հանդէպ բարերարներուն. սակայն սրտի զոհութիւն մը և ներքին արիւթիւն մը կը խրախուսէր զիրենց, թէ այլևս հարուստ էին այնպիսի զանձներով՝ զոր անձնուէր ու հաստատ կամքով պիտի գիտնային կոծնքի և հայրենեաց դատին տրամադրել, և թէ այս պահէն իսկ կը զգային թէ ո՞րքան քաղցր էր անքակտելի պահել այն սիրոյ զօդերը՝ որ աշակերտ ու դաստիարակ իրարու կը միացնէին հոգւով յաւերժապէս:

Գիտենք որ անկեղծ սրտերու արտա-յայտութիւնն էր որ կը բխէր այդ թարգմանին ազնիւ սրտէն ալ, և ուրախ ենք հոս արժանազոր մեր գնահատանքն ու խրախոյսը, մաղթելով և յուսալով որ մեծագոյն յաջողութիւն և յաղթանակներ տանի ապագային՝ ի պարժանս իր վարժարանին, և որ մեծագոյն է՝ իր ազգին և իր բարերարներուն և խնամակալներուն, ինչպէս զովելի և օրինակելի քաջութեամբ պատկեց վարժարանի ընթացքը, արժանանալով ըստ ամենայնի ցուէներու ամբողջական լրութեան բոլոր ուսուցիչներէն՝ յուրախութիւն իր անխոնջ դաստիարակներուն:

Կը յաջորդէր Brahmsի տենդոտ պարերգ մը և անկէ վերջ Wagnerի Tannhäuser էն կտոր մը, որուն խոր ու

անհզ տպաւորութիւնը վայրկեան մը խռհերու մէջ կը տազնապեցնէր միտքը:

Հոս ալ հարկ է մեր խորին զմայլանքն եւ ուրախակցութիւնն յայտնենք Յակոբ Գազանճեանի, որ զարմանալի երազութիւն մը ցցուց դաշնամուրի վրայ, կրկին ու կրկին բուռն, երկար եւ խանգաւառ ծափեր խլելով՝ երբ իր ուսուցչին հետ կը հնչէր այդ քառաձեռն հնչեակները (a quattro mani):

Հուսկ՝ Mendelssohnի կտորէ մը վերջ, վարժարանի ուսումնապետը Հ. Կիւրեղ Վ. Քիպարեան կարդաց շրջանաւարտ աշակերտներու անունները, որոնք ստացան իրենց վկայականները պատուարժան անձերու ձեռքէն. մէկ երկու սաներ բախտն ունէին իրենց իսկ ծնողքին ձեռքէն ընդունելու զայն: Ահաւասիկ անոնց անունները կ'արձանագրենք ի զիտութիւն հայ հասարակութեան.

Կարպիս Գասպարեան	Կարպիս Ալեմշահեան
Արա չօտաղեան	Յովհաննէս Մոմցեան
Յակոբ թարեան	Վարդգէս փրոյդեան
Վահէ Գաւաֆեան	Գեորգ թերզեան
Արմէմ Ժիզմէցեան	Յովհաննէս Առաքիլեան
Յակոբ Գազանճեան	Մուրիկ Նքսէրցեան

Հայրենի շունչով երգ մ'ալ հնչեցին ուրախ սաները, Չուհաճեանի տխրանոյշ Գարունը. ու Պէշիկթաշլեանի «բայց չես հովիկ իմ հայրենեաց»-ը կարծես հծծին մ'էր մեղմիկ հայ շառաւիղներու ականջին եւ սրտին հայրենեաց սիրով, քանի որ սըրբազան է մեր երկրին հողն ու ջուրը, եւ Նահապետին ըսածին պէս «Քանց օտար վարդ — քաղցր է հայրենեաց փուշ», ու աւերակներու լալիւնը կ'արձագանգէր ու կը տպաւորէր զայն ինչ որ յատուկ է տիւրը եւ մեծ յիշատակներուն՝ ցաւ ու սէր. եւ հայերէն աւելի ո՛վ սրբազան ա-

ւերակներ ունի. եւ հայերէն աւելի ո՛վ ցաւ ու սէր:

Գարձեալ բեմ ելաւ արգոյ ուսումնապետ հայրը եւ ծանուցում ըրաւ թէ այս տարի վարժարանի տեսչութիւնը աւելի խրախուսելու համար իր սաները՝ իւրաքանչիւր դասի քաղցոյններուն ընտիր մրցանակներ սահմանած էր, ուսումնական զրքեր: Վարչութեան ծրագրին եւ պատրաստածին վրայ կ'աւելնար Թրիեստի Գաղղիական հիւպատոսինը պարոն Տոլոյի, յետոյ Փրանսական գաղութի ի վենետիկ նախագահ Պարոն Վալլիէինը. կ'արժէ հոս յիշատակել որ մրցանակ մ'ալ սահմանուած էր վանքիս վարդապետացու սաներէն գաղղիերէն լեզուին մէջ յառաջագէտին՝ Գաղղիոյ ի վենետիկ հիւպատոսին պարոն St. Marie ի կողմէն. կը ցաւինք որ այդ բարեսիրտ եւ հայերուս համակիր պատուարժան անձնաւորութիւնները բացակայ էին վերն յիշուած պատճառով. սակայն մրցանակներն իրենց նպատակին հասնել էին զոհութեան ժպիտ մը փայլեցնելով արժանաւորներու երեսին եւ մնացողներն ալ խրախուսելով նոր յաղթանակի,

Յետին նուագ մ'ալ կը հնչէր, զուարթ եւ աշխոյժ. Barbieri di Sivigliaէն կտոր մը. ժպիտն ու սէրը մաղթելու, խնդակցութիւն ու մաղթանքներ ձօնելու առնոց՝ որ կը բուրբէին իրենց զարոցական ընթացքը. ու ամէն ոք երջանիկ ասպարէզ, յուսալից ասպազայ մը կը գուշակէր անոնց:

Երգահանդէս, վկայականներու եւ մըրցանակներու բաշխումն աւարտելէ, ամէն ոք ուրախակցութեան եւ զնահատանքի բառ մ'ունէր. սակայն կը մնար ուրախութեան համեստ ինջոյքը որ յաջորդ օրուան կը թողուէր. այս անգամ հանդէսը բուրբովին

ներքին ու մտերմական էր: Վարչութիւն, ուսուցիչներ, Միաբանութեանս երիցաւորներէն ռաւանք, և հին ու նոր սաներ միայն. բազմաթիւ թափափառներուն և յանկարծաբանութեանց մէջ հոս կը դրոշմենք Մ. — Ռ.ի երիցագոյն սաներէն՝ Պ. Յարութիւն Սորկունեանի հոգեբարձու ճառը, զոր համատարէն զանց բրած էր արտասանել երէկուան հանդէսին մէջ, ունկընդորները չձանձրացնելու դիտումով:

Անկա՛ զմայլող և պաշտող մը Մ.ի և Ռաֆ.ի, սնած թրեանցի և անմահ Ալիշանի գիրկը, իր ամբողջ տնտեսական և վաճառականական կեանքով նուիրած է սկիզբէն ի վեր իւր անձն ու շահերը իր սիրելի ազգին, զոր այնքան խորապէս սիրել սորված է Միսթարի զաւակներէն, պատկառելի պատկեր մը և ներկայացուցիչ Պէշկիթաշեաններու, թղթեաններու, թերզեաններու ևն. մասնակցելով անոնց հետ իր կարգին հայութեան մտքին և արտին դաստիարակութեամբ. ուստի ամենամեծ ուրախութեամբ է որ հոս կը դրոշմենք այդ պատկառելի հայորդուն դողդոջուն մատներուն բայց մեծ ու ազգասէր արտին բարախիւնները՝ ուղղուած իր մանկահասակ նորափոխիթ աշակերտակիցներուն.

Երէկուան շքեղ հանդէսն որոյ ներկայ գլուխուրդն էր հանդէսն ունեցա՛ չեմ կարող բառերով բացատրել ինչ խոր և գողար յիշատակներ կը զարթոնանէ սրտիս մէջ: Այո՛ սիրելի աշակերտակիցք, հս ալ Ձեզ պէս վայելած եմ Մուրադ-Ռաֆայէլ անմահ բարիբարաց պերճ առատաւճանութեան շնորհքը, հս ալ Ձեզ պէս օգտուած եմ ազգասէր, անձուէր Միսթարեան շարք հայ-րախնամ վարչութեան առաւելութիւնները, սակայն կը ցաւիմ հոս ըսել որ իրենց անխոնջ աշխատութեանց փոխարինութիւնը, որ իրաւամբ հաշարէ չէին սպասել, միշտ շնորհակալատ սրտերու երախտագիտութեան զգացումներ եղած չեն, անխորհուրդ և անզետ քննադատութեանց նշաւակ են դարձած երբեմն. բայց այդպիսի անխիղճ

յարձակումնք կը նմանին լակուռայի հանգարտ շուրեւրուն՝ որ յանկարծ մեքենայարժ մակոյկնեւրու երազաստը ընթացքէն վրդոված անգոր ալիքներ կը ձևանան որ կու գան փչիլ, յիւրեանց ի փաստ, ամուր քարաշէն ափանց դէմ:

Եթէ ծանն ի պտղոյ անտի ճանաչի, Միսթարեան միաբանութեան զպրոցներու նկատմամբ ազգին մատուցած ծառայութիւններն մերձաւորապէս դարէ մը ի վեր ամէնուն յայտնի է: Մուրադ-Ռաֆայէլ վարժարաններու հարիւրաւոր սաները այդ ժամանակամիջոցին մէջ առողջ և հայրենասէր կրթութեամբ օժտուած դարձան իւրենց հայրենիքն և, իբրեւ լոյս ի խաւարի, ազգայնութեան գիտակցութիւնը, ուսմանց սէրն, պանծալի նախահարց պատմութիւնը և հիւսնալի լեզուն փոփոցին ծաւալեցին ընկերութեան ամէն խաւերուն մէջ. հս ինքն անձամբ ակնհայտս այդ հիւստքանչ և հոգեցունչ իսնդալաւորութեան կրեամ վկայել որ այդ Միսթարայ — երկրորդ Լուսաւորչին Հայոց — արժանաւոր աշակերտաց քրտնաշուն գործունէութեան արդիւնքն էր: Անոնք լաւ ըմբռնած են որ դաստիարակութեան հիմն կը կապախալ նախ պատարաստել ուսանողներն կենաց պայքարին՝ որ կը սկսի իրենց համար վարժարանի դռնէն դուրս ելած ատենէն. երկրորդ՝ որ նախ լաւ գաւառիկն աւելի զօլելի, լուսաւորեալ և անձնուէր քաղաքացիներ հասցընել, որոնք ի հարկին հարստային շահերուն՝ առանձնական զոհելով՝ գիտնան պաշտպանել ազգային նախաճառ իրաւունքներն, միևնոյն անգամ իրենց զօլելի վարքով և հանճարեղ իմացակաւ նութեամբ փառք և պատիւ բերեն անոր՝ քաղաքակիրթ ժողովրդոց հանդէպ ուր որ բազմէ հարկադրէ գիրենք ապրիլ:

Արտաւարիկ հայրենագութիւն հայ ազգն որ յետին խեղճութեան մէջ ի չորիս մագա աշխարհի կը դնգերի, անդէկ և անաւաշ այդ փոթորկալից ովկիանի կրեանքներու մատնուած նաւաւ մը պէս ի զուր ապահովութեան նաւահանգիստ մը կը փնտռէ, մեր են իրեն զաւակները, ինչո՛ւ չեն հասնիր իւր օգնութեան:

Ահաւարիկ սիրելի աշակերտակիցք, կը բացուի մեր դիմաց նոր ասպարէզ մը, դուք իբրեւ նոր սերունդ հայկական զարմին, յոյս և լոյս պիտի բերէք անոր բազմադէտ թշուառութեամբ յոգնած և ընկճած մարմնոյն. այդ եղբայրական սէրն մտաց և զգացմանց համբարաշխութիւնը, որ զպրկուցական կենաց մէջ կը ծնանի և կը սնանի, ասուք մեզ հետ ուր որ գտնուիք. փոքրոգի ու փոքուն կարծեաց անհամաձայնութիւնք չուծա-

ցուցանեն ձեզ իրարմէ. ձեր նշանաբանն միշտ ըլլայ. «Ջուգութիւն է մայր բարեաց, անգուգութիւնն ձեռող չարեաց»։ յիշեցէք միշտ որ շատ անգամ սնոտի անմիաբանութիւն մը մեր ազգին մեծամեծ աղէտից պատճառն եղած է։

Վերջին աշխարհակործան պատերազմէն առաջ — թէպէտ միշտ կեղծեալ իւր բռնաւոր Պեւտերին —, Ազգը գոնեա կեղբորն մը ունէր ուր հեշտագոյն էր խնամեա և դարման տանիլ իւր թշուառութեան. այժմ ցրուած վիճակին մէջ վըտանգն մեծ է, որ օտար երկրներու մոլութեանց քան թէ առաքինութեանց հետեւելով կորսնցնեն իրենց տոհմային բարի սովորութիւնները կորսնցնեն և լեզուն, և դատանն անկերպարան մարմին մը անտարբեր ազգութեան, անյազ ի հանոյս, անխիղճ և անհաւատարիմ իրենց յանձնուած պաշտօնին մէջ. և ինչ զարմանք մինչ ներկայ դառուս ընկերական կացութիւնը նիւթապաշտ աշխարհագրաքացութեան վրայ հիմնուած է հրապուրչի անուններու ներքեւ, որ են ընկերվաւութիւն, համաշխարհային եղբայրութիւն, հաւասարութիւն և ազատութիւն։ Ահա այս ազգաւոր վտանգներուն զէմ է որ զինեալ առողջ սկզբունքներով պիտի իշխաք յասպարէզ՝ ազատելու Ազգն իւր վերջին գլորմանէն յայնտակ անգունըն ոքշուութեան։

Առջի բերան որչափ զոյգն երեւի ձեզ մատուցած ծառայութիւնիդ, մի՛ արհամարհէք զայնս, զի մեծ և ընդհանուր ճգունք՝ անհատական ճգանց համագումարն են. անոնք կը նմանին այլաշխարհային անգինն մեքենան քալեցնելու համար այն փոքրիկ անիւներուն՝ որոնք անհրաժեշտ պիտանին են անոր շարժման։ Ամէն յառաջադիմութիւն որ թնայուն է՝ դանդաղ բայց աստիճանաւոր պէտք է օկոսի, պէտք չէ վհատիլ. համբերութիւն և ուժեղ կամք կը յաղթեն ամէն դժուարութեանց և վաղ կամ անազան ձեր աշխատանքն պիտի պատկուին յաջողութեամբ։

Որբերու թիւն 60000 կը հանեն, երանի թէ այդ չափազանց ըլլար, բայց թուոյն վրայ չէ, ըլլայ այդ 6000, 600 կամ վեց՝ որբացեող բազմակները դեռ ես մեր բոլորտից եր պաշարեն. յայտմ մասին ուրախ եմ Ձեզ անեան որ Ազգն կատարեալ արթնցած կ'երեւի այս մասին և ահա ինչ որ կը զրէ Է. Պոլսոյ Պատրիարքի տեղակալն Նազլեան եպիսկոպոս ինձ ուղղած նամակին մէջ. «Or plus d'un motif sérieux et grave m'incite à transformer cet orphelinat provisoire en un Etablissement permanent où seraient envoyées toutes les jeunes filles

que l'on réussirait à soustraire à l'atmosphère délétère de nos parages et aux multiples dangers qui les guettent et les menacent.

Անցելոյն իւթօրհական երգներն եզական ազատութեան պէտքին առ այժմ մոռցուն և աւելն շանք և ճիգ պէտք է ուղղուին ազգին վերականգնանցման՝ դարման տանելով անոր նիւթական և հոգեկան առօրեայ ախտոյից, անող միայն իւր էութիւնը յուսալի է պահել. ընդհանուր աշխարհի ներկայ խախուռ դրութիւնը մեծ փոփոխութեանց ենթակայ է, գրեթե ամենէն մութ վայրկեաններն արշալոյսէն քիչ մը առաջ են, ասպզան Աստուծոյ ձեռքէն, ուստի պէտք չէ յուսահատիլ. բաւական է որ ամէնքնիս ձեռք ձեռքի տուած անյողողող և անձանձիւ յարստութեամբ աշխատինք փրկութեան գործին, aide-toi et le Ciel t'aidera.

Կը ցաւիմ, սիրելիք, որ այս Զեր վերջին հըրձուալի հացկերոյթին առթիւ փոխանակ զուարթ թել մը զարնելու, իմ գոսացեալ քնարս ողբերգակ խորհրդածութեանց երեմիական մը հընչեցուն, բայց իրողութիւնը որչափ քողարկուի՝ այդքան անելի սարսափելի կերպարանք կը ստանայ. յամենայն դէպս միթէ չէ՞նք մեք ես արժանի սերունդք Մամիկոնեան, Ղեւոնդեան քաջազանց, որք բորբոքեալ Աստուծոյ և Ազգի սիրով՝ ուրախ և զուարթ խոյացան Սասանեան տասնապատիկ անելի զօրաւոր բանակին վրայ։ Աւտի և դուք, սիրելի աշակերտակիցք, պարպեցէք ձեր բաժակները կեցցէներու ձայններով յանմահ յիշատակ մեծահոգի բարերարաց Մուրատ և Ռափայելի և ձեր հայրաբնիւն ապագառելի տեսլութեան Միտիթարայ արժանաւոր Ուխտին։

« ԲԱՄԱՄԱՎԷՊ »-ն ալ իր ինդակցութիւնը կը բերէ յաջող ընթացքի մը փակումին ու բերկրալից այս վայրկենին. ու մաղթանք մը. սրտագին՝ ապագայի մը համար որ բեղուն ըլլայ տառապեալ հայրենիքի կանգնումին, երջանկութեան մը՝ որուն կը տենչան, ու յաղթանակներուն՝ որոնցմով պիտի անմահանան։

Հ. ԵՂԱՍ ՓԵՏԻՆԵԱՆ

